

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№14-04-004

Մարզ Վայոց ձոր, համայնք Ջերմուկ, քաղաք
Ջերմուկ, Ձախափնյակ թաղամասի 2-րդ փողոց 8/5
հողամաս, հասցեում գտնվող 67,00 քմ մակերեսով
հողատարածքի շուկայական արժեքի գնահատման

Գնահատումը կատարված է 11.04.2026 թ. դրությամբ

Հաշվետվության կազմման ամսաթիվ 14.04.2026 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ` Ջերմուկի համայնքապետարան

ԳՆԱՅԱՏՈՂ` «ՍԻԼՎԵՐ ՓՐԱՅԶ» ՍՊԸ



Բովանդակություն

| | |
|--|----|
| 1. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... | 3 |
| 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... | 4 |
| 2. ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ և ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ և ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ..... | 6 |
| 2.1 ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄՆԱՆԵՐ..... | 7 |
| 3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ..... | 8 |
| 3.1 ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ..... | 8 |
| 3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... | 9 |
| 5 ԱՆՇԱՐԺ ԳՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ..... | 14 |
| 5.1 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... | 14 |
| 6 ՇԵՆՔԻ ԼՎԱԿԱԳՈՒՅՆ ՈՒ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... | 15 |
| 7 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄՈՒՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ..... | 16 |
| 8 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ..... | 19 |
| 8.1 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՈՎ..... | 19 |
| 9. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... | 23 |
| 10 ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... | 24 |
| 11 ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... | 25 |

Հավելված 1

- ✓ Ֆոտոնկարագիր
- ✓ Համեմատական առաջարկներ պարունակող նյութերի պատճենները
- ✓ կադաստրային վկայականի պատճեն

Հավելված 2

- ✓ Մասնագիտական պատրաստանաւորւթյան ապահովագրոթյան վկայական
- ✓ Գնահատողի որակավորման վկայակնր
- ✓ Գնահատողների ուսումնական փաստաթղթեր



1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատողի կատարած ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ , Մարզ Վայոց ձոր, համայնք Ջերմուկ, քաղաք Ջերմուկ, Ձախափնյակ թաղամասի 2-րդ փողոց 8/5 հողամաս հասցեում գտնվող՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնքին պատկանող, 67,00 քմ մակերեսով՝ հողատարածքի շուկայական արժեքը առ 11.04.2026թ., կազմում է

| Անշարժ գույքի շուկայական արժեքը կլորացված դրամ | | |
|---|------------------|---------|
| Կադաստրային ծածկագիր | 10-002-0030-0044 | |
| Մարզ Վայոց ձոր, համայնք Ջերմուկ, քաղաք Ջերմուկ, Ձախափնյակ թաղամասի 2-րդ փողոց 8/5 հողամաս | 420 000 | ՀՀ ԴՐԱՄ |

Բոլոր տեղեկությունները և վերլուծությունները, որոնք օգտագործվել են գնահատման հաշվետվությունում, կարելի է գտնել հաշվետվության համապատասխան բաժիններում: Եթե որևէ հարց ունեք գնահատման կամ գնահատման մեթոդաբանության վերաբերյալ, խնդրում ենք կապվել մեզ հետ:

Ելակետային տվյալների ամբողջական նկարագրությունը, ինչպես նաև բոլոր ենթադրությունները, հաշվարկները և եզրակացությունները ներկայացված են կից գնահատման հաշվետվության մեջ: Սույն հաշվետվության մասերը չպետք է մեկնաբանվեն առանձին-առանձին, այլ միայն ուղեկցող հաշվետվության ամբողջ տեքստով հաշվի առնելով դրանում պարունակվող բոլոր ենթադրությունները և սահմանափակումները: Մեր հաշվետվությունում պարունակվող եզրակացությունները հիմնված են շուկայի ուսումնասիրության արդյունքում ստացված հաշվարկների, եզրակացությունների և այլ տեղեկատվությունների, մեր փորձի, մասնագիտական գիտելիքների, ինչպես նաև գործնական հանդիպումների հիման վրա: «Սիլվեր Փրայզ» ՍՊԸ-ն գնահատման աշխատանքի շրջանակներում չի իրականացրել օբյեկտի բնութագրերի որևէ ստուգում, որը հնարավոր չէր հայտնաբերել տեսողական զննությամբ: Գնահատումը կատարվել է համաձայն «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ իրավական ակտերի և ՀՀ գնահատման ստանդարտների :

ԳՆԱՀԱՏՈՂ՝

/Վկայական № ԳԳ 2024-13/

Ա. Հովհաննիսյան

Հաստատում եմ՝

«ՍԻԼՎԵՐ ՓՐԱՅԶ» ՍՊԸ -ի տնօրեն՝

Ա. Բաղդասարյան





2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

| | |
|--------------------------------------|--|
| Հաշվետվության հերթական համարը) | № 14-04-004 |
| Գնահատման նպատակը | օտարման գործընթացը կազմակերպելու նպատակով |
| Գնահատման առաջադրանքը | շուկայական արժեքի որոշում |
| Գնահատման ամսաթիվ | 11.04.2026 |
| Հաշվետվության կազմման ամսաթիվ | 14.04.2026 |
| Տեղազննման ամսաթիվ | 11.04.2026 |
| Աշխատանքների կատարման ժամանակաշրջանը | 10.04.2026-14.04.2026 |
| Գնահատման հիմքը | ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԱՆ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԶՀ-ՄԱԾԶԲ-26/18 |

| Գնահատվող անշարժ գույքի համառոտ նկարագիրը | |
|--|---|
| Հասցե | Մարզ Վայոց ձոր, համայնք Զերմուկ, քաղաք Զերմուկ, Զախափնյակ թաղամասի 2-րդ փողոց 8/5 հողամաս |
| Սեփականատերեր | ՀՀ Վայոց ձորի մարզ, Զերմուկ համայնք |
| Իրավունքի տեսակ | սեփականություն |
| Սեփականության իրավունքի գրանցման վկայական | 25122025-10-0010 տրված 25.12.2025 թ-ին |
| Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը (դրամ) | 103 950.00 |
| Կադաստրային ծածկագիր | 10-002-0030-0044 |
| Փոխարժեք (դրամ) | 374 |
| Նպատակային նշանակությունը | բնակավայրերի |
| Գործառնական նշանակությունը | բնակելի |
| Հողամասի մակերես (քմ) | 67 |

| | |
|---|---|
| Հարցման ամսաթիվ | 26/04/2026 11:16:58 |
| Անշարժ գույքի հասցեն՝ | Մարզ Վայոց ձոր, համայնք Զերմուկ, քաղաք Զերմուկ, Զախափնյակ թաղամասի 2-րդ փողոց 8/5 հողամաս |
| Անշարժ գույքի տեսակը՝ | Չկառուցապատված հողամաս |
| Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | 194 328.75 |
| Անշարժ գույքի հարկը 2024 թ.ի համար (ՀՀ դրամ) | 582.99 |
| Անշարժ գույքի հարկը 2025 թ.ի համար (ՀՀ դրամ) | 874.48 |
| Անշարժ գույքի հարկը 2026 թ.ի համար (ՀՀ դրամ) | 1 165.97 |

Ծանոթություն՝ տվյալները արտացոլված են հարցման ամսաթվի դրությամբ Կադաստրի կոմիտեի կողմից գրանցված (հաշվառված) տվյալների հիման վրա:





| Տեղեկություններ պատվիրատու մասին | |
|---|---|
| Պատվիրատու (Անուն ազգանուն Անձնագիր) | Ջերմուկի համայնքապետարան ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900362040108 ՀՎՀՀ 08917563 |
| Գնահատման հիմք | ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՋՀ-ՄԱԾՁԲ-26/18 |
| Տեղեկություններ կատարողի մասին | |
| Ընկերության անվանումը: | «Սիլվեր փրայզ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| Իրավաբանական հասցեն | Հայաստան ք. Երևան, Դավիթաշեն 37 տարածք |
| Կատարողի գտնվելու վայրը: | Հայաստան ք. Երևան, Դավիթաշեն 37 տարածք |
| Կատարողի հեռախոսի համարները. | +374 (93) 26 05 88, +7 909 9710989 |
| Կատարողի բանկային տվյալները. | Բանկ «Այդի Բանկ» ՓԲԸ Հ/Հ 11811033645000 ՀՎՀՀ 08284485 Էլ.փոստ silverprize@mail.ru |
| Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագիր | «Սիլվեր փրայզ» ՍՊԸ ընկերության պատասխանատվությունը ապահովագրված է 150 000 000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) հհ դրամի չափով |
| <u>Ներգրված գնահատողներ (մասնագետներ)</u> | |
| Անուն Ազգանուն | Արամ Հովհաննիսյան |
| Տեղեկություններ գնահատողների ինքնագրագավորվող միության անդամակցության մասին. | Փորձագիտական խորհուրդ գնահատողների ինքնակարգավորվող համահայկական միություն ՀԿ հավաստագիր տրված 26.03.2024թ |
| գնահատողի որակավորման վկայական | գնահատողի մասնագիտական որակավորում (Գնահատողի վկայական № ԳԳ 2024-13/ վկայականի գործողության ժամկետը 21.03.2024-21.03.2029 թ |
| Հատուկ դասընթացներ և արտոնագրեր | Ա. Հովհաննիսյան - ավարտել է ՀՊԱՀ հողաշինարարություն և հողային կադատր բաժինը: Որպես Գնահատող աշխատել է 2010թ ից, 2015-2022 թթ աշխատել է ՌԴ, ք. Մոսկվայում, ՌԴ գնահատողների միության անդամ, Մասնակցել է ամերիկյան CCIM ինստիտուտի և 'Ernst & young' միջազգային աուդիտորական ֆիրմայում կազմակերպված դասընթացներին: Ունի C1101, C1102, C1103 որակավորումները և 'Ernst & young' աուդիտորական ֆիրմայի կողմից տրված բիզնես գնահատման սերտիֆիկատ |
| Աշխատանքային փորձը գնահատման գործունեության մեջ | 15 տարի |





2. ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ և ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ և ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Տվյալ հաշվետվությունը կազմված է հաշվի առնելով հետևյալ թույլտվությունները եվ սահմանափակող պայմանները.

- սույն հաշվետվությունը վավեր է միայն ամբողջական տեսքով ներկայացմամբ նրանում առկա առանձին մասերը չեն կարող մեկնաբանվել առանձին.
- սույն հաշվետվությունը կարող է օգտագործվել պայմանագրով նշված նպատակ(ներ)ին համապատասխան,
- սույն հաշվետվությունը իրենից ներկայացնում է գնահատողի մասնագիտական կարծիքը գնահատման օբյեկտի վերաբերյալ և այն ունի խորհրդատվական բնույթ,
- գնահատումը կատարվում է գնահատման ամսաթվի դրությամբ, իսկ դրան հաջորդող օրերին ռազմաքաղաքական, ֆինանսատնտեսական, իրավական և այլ գործոնների, ինչպես նաև տարերային աղետների, այլ երևույթների ազդեցությամբ պայմանավորված անշարժ գույքի շուկայում տեղի ունեցած փոփոխությունների (գծած, գնանկում), և այդ փոփոխություններով էլ պայմանավորված գնահատման օբյեկտի շուկայական և (կամ) շուկայականից տարբերվող արժեքային տարբերությունների համար պատասխանատվություն չի կրում,
- գնահատման աշխատանքների կատարման ժամանակ ենթադրվում է քողարկված (թաքնված) գործոնների բացակայություն և գնահատման աշխատանքները կատարված են տեսողական զննության հիման վրա, իսկ գնահատողը պատասխանատվություն չի կրում գնահատման արդյունքների վրա ազդող և տեսողական զննությամբ չբացահայտվող գործոնների հաշվառման համար:
- Գնահատողները չեն կատարել գնահատվող օբյեկտի փաստաթղթերի փորձաքննություն և պատասխանատվություն չեն կրում գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հետ կապված իրավաբանական բնույթի հարցերում.
- Բոլոր հաշվարկները՝ եզրակացությունները և եզրահանգումները կատարված են հասանելի աղբյուրներից ստացված ինֆորմացիայի հիման վրա, որոնք գնահատողն ընդունում է հավաստի, սակայն չի կարող երաշխավորել տեղեկատվության բացարձակ հստակությունը: Գնահատողը պատասխանատվություն չի կրում ոչ գնահատման կամ սեփականության վիճակի վրա ազդող թաքնված փաստերի առկայության, ոչ դրանց հետագա բացահայտման համար:
- Գնահատման օբյեկտները գնահատված են անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի պատճենի հիման վրա.
- Գնահատողները կատարել են գնահատման առարկա գույքի տեսողական տեղազննում և պատասխանատվություն չեն կրում գույքի այն թերությունների համար, որոնք հնարավոր չէ հայտնաբերել տեսողական զննման արդյունքում.
- Գնահատման հաշվետվությունը պարունակում է Կատարողների պրոֆեսիոնալ կարծիքը արժեքի նկատմամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ գնահատված գույքի հետ կապված գործարքների գինը կարող է տարբերվել գնահատման արժեքից, ինչը պայմանավորվում է կողմերի բանակցությունների վարման կարողությամբ, գործարքի պայմաններով և այլ հանգամանքներով:
- Գնահատման գործունեություն իրականացնելիս գնահատողը պետք է.
- տիրապետի մասնագիտական գիտելիքների և հմտություններին գնահատումը արդյունավետ կատարելու համար,
- լինի ճշմարտացի և ազնիվ,
- գնահատումը կատարի խստագույնս անկախ, օբյեկտիվ և անաչառ,
- բարձր պահի գնահատողի մասնագիտական վարկանիշը,
- իր վարքագծով նպաստի գնահատողի մասնագիտության նկատմամբ հասարակության վստահության պահպանմանն ու բարձրացմանը,
- գործունեությամբ վնաս չպատճառի իր գործընկերների բարի համբավին, կազմակերպությանը, պատվիրատուներին, պետությանը և հասարակությանը,
- հրաժարվի գնահատման աշխատանքից, եթե գտնում է, որ չի կարող այն ժամանակին կատարել,



- մինչև այլ գնահատողի կամ մասնագետի օգնությանը դիմելը՝ համոզվի նրանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների առկայության մեջ և երաշխավորի, որ իրեն աջակցողները ենթարկվում են համապատասխան վարքագծի կանոններին,
- գնահատումը իրականացնի անհրաժեշտ հետևողականությամբ և առևտրային ու ծառայողական գաղտնիքի պահպանմամբ, պատշաճ որակով և որջամիտ ժամկետներում,
- բարեխղճորեն տեղեկություններ հավաքի և հետազոտություն կատարի, որպեսզի հիմնավորվի գնահատության տվյալների հավաստիությունը,
- դիմի հնարավոր նախագուշակական միջոցների, որպեսզի իր պատվիրատուների և գործընկերների միջև շահերի բախում չառաջանա,
- գնահատման պատվերի կատարման ընթացքում հաշվի առնի և հիմնվի այլ մասնագիտական եզրակացությունների վրա, որոնց նա չի տիրապետում,
- մինչև գնահատության հաշվետվության կազմումը, անհրաժեշտության դեպքում, պատվիրատուից պահանջի մանրամասն գրավոր հրահանգներ վիճահարույց կամ սխալ մեկնաբանություններից խուսափելու համար,
- այլ գնահատողի գնահատման հաշվետվության վերաբերյալ կարծիքի տրամադրման ժամանակ առաջնորդվի անաչառ տրամաբանությամբ և հիմնավորի իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը տվյալ հաշվետվության վերաբերյալ:
- Գնահատողը չպետք է.
- գործի այնպիսի վարքագծով, որը կարող է մոլորության մեջ գցել և հանգեցնել խաբեության,
- գիտակցաբար կազմի և հրապարակի հաշվետվություններ, որոնք կպարունակեն սխալ, կանխակալ կամ կեղծ եզրակացություններ կամ վերլուծություններ,
- գիտակցաբար իր տվյալների ու տեղեկությունների անհրաժեշտ քանակի ապահովման համար օգտագործի կեղծ տվյալներ կամ ուռճացված տեղեկություններ,
- ուրիշ անձանց բացահայտի պատվիրատուի կողմից ստացված տվյալները կամ գնահատման արդյունքները, բացառությամբ պատվիրատուի գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- ընդունի նախօրոք որոշված կարծիքներ և եզրահանգումներ պարունակող գնահատման պատվերներ,
- գնահատման ընթացքում հիմնվի պատվիրատուի կամ այլ անձանց կողմից տրամադրված ոչ հավաստի տեղեկության (տվյալի) վրա,
- գնահատման աշխատանքի հետ կապված վճարման չափը կապի գնահատման արդյունքի հետ:

2.1 ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄՆԱՆԵՐ

Հատուկ պայմանները հանդիսանում են սույն հաշվետվության անքակտելի մասը.

Սույն հաշվետվությունը վավեր է միայն ամբողջությամբ ներկայացված և միայն նշված նպատակի համաձայն: Գնահատողը և Պատվիրատուն չեն կարող օգտագործել հաշվետվությունը (կամ նրա առանձին մասը) այլ կերպ, քան նախատեսված է գնահատման պայմանագրով:

Գնահատման համար տրամադրված և հաշվետվության մեջ արտացոլված տեղեկությունները համարվում են հավաստի, սակայն գնահատողը չի կարող երաշխավորել վերոհիշյալ տվյալների բացարձակ ճշտությունը, այդ պատճառով հնարավորության դեպքում, հղումներ է կատարվում տեղեկատվության բոլոր աղբյուրներին:

Գնահատողը գնահատվող գույքի տեղազննումը կատարել է հասարակ տեսողական զննությամբ և պատասխանատու չէ գնահատվող գույքի թաքնված բնութագրիչների, կամ թերությունների համար:

Գնահատողը գործել է, որպես անկախ կատարող (ՀՀ գնահատման գործունեության մասին օրենք Հոդված 15):

Գնահատվող առարկայի վերաբերյալ գնահատողի կարծիքը վավեր է միայն գնահատման օրվա դրությամբ: Գնահատողը պատասխանատվություն չի կրում տնտեսական, սոցիալական, ֆիզիկական, իրավական, քաղաքական և այլ գործոնների փոփոխության համար, որոնք կարող են ի հայտ գալ





հետագայում և ներազդել շուկայական իրավիճակի, հետևաբար, և օբյեկտի շուկայական արժեքի վրա:

Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:

Գնահատման արդյունքները ունեն խորհրդատվական բնույթ:

Գնահատողի կողմից կատարված աշխատանքի արդյունքների իսկությունը հիմնված է նրա աշխատանքային փորձի և մատչելի տեղեկատվության վրա:

Սույն գնահատման հաշվետվությունը պարունակում է գնահատողի մասնագիտական կարծիքը գնահատվող առարկայի վերաբերյալ, և չի հանդիսանում երաշխիք, որ այն կվաճառվի ազատ շուկայում սույն հաշվետվության մեջ նշված արժեքին հավասար գնով:

Գնահատողի կատարված աշխատանքի վարձատրությունը կապված չէ գնահատման արդյունքի և կատարված եզրակացությունների հետ:

Գնահատողը պատասխանատվություն չի կրում գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքի տեսակի իրավական նկարագրության հետ կապված հարցերի համար: Գնահատվող օբյեկտի՝ Պատվիրատուի կողմից ներկայացված իրավական փաթեթը համարվում է արժանահավատ: Ենթադրվում է, որ գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքի տեսակները լիարժեք համապատասխանում են ՀՀ գործող օրենսդրությանը: Գնահատվող առարկան գնահատվում է որպես ազատ որևէ սահմանափակումներից և գույքային պահանջներից, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Գնահատողը ենթադրում է, որ գնահատվող առարկան լիարժեք համապատասխանում է նորմատիվային փաստաթղթերին, հակառակ դեպքում նման անհամապատասխանությունները մատնանշված և հաշվի են առնված հաշվետվությունում: Գնահատողը չի իրականացրել տեղանքի չափագրման աշխատանքներ, և պատասխանատու չէ դրանց համար: Գնահատողը գնահատման ընթացքում առաջնորդվել է փաստաթղթերի լուսապատճեններով, որոնք տրամադրվել են Պատվիրատուի կողմից, և պատասխանատու չէ այդ փաստաթղթերի լուսապատճենների և բնօրինակների միջև հնարավոր անհամապատասխանությունների համար:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գնահատման աշխատանքները կազմակերպվել են հետևյալ հաջորդականությամբ.

- ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրում,
- անշարժ գույքի մասնագիտական տեղազնֆում և լուսանկարչական աշխատանքներ,
- շուկայական արժեքի որոշման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,
- հատուկ տեղեկությունների հավաքագրում և վերլուծություն,
- գնահատման անհրաժեշտ մեթոդների ընտրություն
- անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում,
- գնահատման հաշվետվության կազմում:

3.1 ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ

Գնահատման գործընթացն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական փուլերը՝

- Գնահատման Պատվիրատուի հետ գնահատման պայմանագրի կնքում,
- Գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրում,
- Գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում, ուսումնասիրում,
- Գնահատվող անշարժ գույքի տեղազննում, քանակական ու որակական բնութագրերի որոշում, դրա տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, այլ տեղեկատվության հավաքագրում,



- Աղյուսակի կազմում՝ ըստ անշարժ գույքի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության վերլուծության, որը ներկայացնում է Պատվիրատուն,
- Անշարժ գույքի շուկայի վերլուծություն գնահատվող անշարժ գույքի տարածաշրջանում,
- Գնահատման սկզբունքների կիրառում և համադրում,
- Գնահատման մեթոդների ընտրություն և կիրառում,
- Շուկայական արժեքի որոշմանն ուղղված հաշվարկների կատարում,
- Արդյունքների համաձայնեցում,
- Գնահատման հաշվետվության կազմում, և վերջինիս տրամադրում Պատվիրատուին :

3. ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2025


ԹՎԱԿԱՆԻ

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2025 թվականի փետրվարին գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 2,918 գործարք, որից 113-ը ձեռք է բերվել կառուցապատողից: Մարզերում 2025 թվականի փետրվարին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 65.0 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2025 թվականի փետրվարին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1





Աղյուսակ 5.7-4

| Վարչական շրջան | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր | | | | | | | |
|-----------------|---|--------------|-----------------|--------------|----------------------|--------------|---------------------------|--------------|--|---------------|-----------------|--------------|----------------------|--------------|---------------------------|--------------|
| | գյուղ. նշանակության | | արդյունաբերական | | բնակավայրերի | | | | գյուղ. նշանակության | | արդյունաբերական | | բնակավայրերի | | | |
| | | | | | բնակիկ կառուցապատման | | հասարակական կառուցապատման | | | | | | բնակիկ կառուցապատման | | հասարակական կառուցապատման | |
| | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) | միավոր | մակերես (հա) |
| Արագածոտն | 14 | 3.65 | 2 | 2.30 | 23 | 1.72 | 2 | 0.34 | 140 | 107.37 | 4 | 0.70 | 74 | 6.99 | 6 | 0.75 |
| Արարատ | 8 | 4.92 | 2 | 0.27 | 16 | 1.57 | 4 | 0.09 | 148 | 91.48 | 2 | 0.53 | 94 | 7.48 | 8 | 0.81 |
| Արմավիր | 3 | 0.65 | 1 | 0.03 | 6 | 0.40 | 1 | 0.004 | 185 | 113.16 | 1 | 0.26 | 136 | 11.79 | 7 | 0.49 |
| Գեղարքունիք | 1 | 12.82 | 3 | 0.82 | 15 | 0.51 | 10 | 0.36 | 18 | 20.98 | 2 | 0.09 | 33 | 4.15 | 4 | 0.05 |
| Լոռի | 4 | 2.11 | 0 | 0.00 | 11 | 0.70 | 3 | 0.06 | 25 | 12.19 | 7 | 0.78 | 22 | 2.91 | 8 | 0.29 |
| Կոտայք | 17 | 13.14 | 0 | 0.00 | 17 | 1.02 | 12 | 0.12 | 287 | 116.77 | 5 | 1.80 | 148 | 12.90 | 7 | 1.18 |
| Շիրակ | 0 | 0.00 | 3 | 0.33 | 11 | 0.88 | 9 | 0.16 | 16 | 14.80 | 1 | 0.10 | 19 | 1.70 | 4 | 0.07 |
| Սյունիք | 0 | 0.00 | 1 | 6.09 | 5 | 0.10 | 2 | 0.01 | 32 | 35.03 | 2 | 0.29 | 10 | 0.93 | 5 | 5.29 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.57 | 3 | 0.48 | 20 | 5.75 | 0 | 0.00 | 10 | 1.30 | 2 | 1.21 |
| Տավուշ | 8 | 4.76 | 0 | 0.00 | 37 | 2.86 | 8 | 0.98 | 88 | 43.80 | 1 | 0.05 | 40 | 2.89 | 4 | 0.76 |
| Ընդամենը | 55 | 42.05 | 12 | 9.84 | 145 | 10.33 | 54 | 2.604 | 959 | 561.33 | 25 | 4.60 | 586 | 53.04 | 55 | 10.90 |

Աղյուսակ 3.7-6-ում ներկայացված է 2025 թվականին Հանրապետության առավել ակտիվ քաղաքներում՝ բացառությամբ Երևան քաղաքի, վաճառված բնակավայրերի հողերի պայմանագրային միջին գների վերլուծության արդյունքները 1մ² մակերեսի հաշվարկով.

Աղյուսակ 3.7-6

| Մարզ | Քաղաք | 2024 թվական | փոփոխումը | 2025 թվական |
|-------------|-------------|-------------|-----------|-------------|
| Արագածոտն | Աշտարակ | 11,100 | 3.2% | 11,450 |
| | Ապարան | 3,200 | -3.1% | 3,100 |
| Արարատ | Արտաշատ | 10,750 | -3.3% | 10,400 |
| | Մասիս | 10,300 | 0.5% | 10,350 |
| | Վեդի | 4,050 | 4.9% | 4,250 |
| Արմավիր | Վաղարշապատ | 12,500 | 2.4% | 12,800 |
| | Արմավիր | 9,450 | 0.5% | 9,500 |
| Գեղարքունիք | Սևան | 5,650 | 5.3% | 5,950 |
| | Մարտունի | 2,500 | 4.0% | 2,600 |
| | Վարդենիս | 1,600 | 0.0% | 1,600 |
| Լոռի | Վանաձոր | 11,850 | 2.1% | 12,100 |
| | Ստեփանավան | 3,950 | -2.5% | 3,850 |
| | Այավերդի | 3,100 | 0.0% | 3,100 |
| Կոտայք | Արուսյան | 14,500 | 8.3% | 15,700 |
| | Հրազդան | 6,100 | 8.2% | 6,600 |
| Շիրակ | Գյումրի | 12,100 | 3.3% | 12,500 |
| Սյունիք | Գորիս | 5,000 | -1.0% | 4,950 |
| | Կապան | 3,550 | 1.4% | 3,600 |
| | Մեղրի | 1,800 | 0.0% | 1,800 |
| Վայոց ձոր | Եղեգնաձոր | 5,950 | 5.0% | 6,250 |
| | Զեյթուն | 6,750 | 2.2% | 6,900 |
| Տավուշ | Դիլիջան | 11,150 | 2.7% | 11,450 |
| | Իջևան | 4,850 | 3.1% | 5,000 |
| | Նոյեմբերյան | 2,500 | 0.0% | 2,500 |





Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2025 թվականի փետրվարին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի փետրվար և 2025 թվականի հունվար ամիսների սկստմամբ.

Աղյուսակ 3.3-1

| Ը/Ը | Գույքի տեսակ | 2024 թվականի փետրվար | փոփոխումը | 2025 թվականի փետրվար | փոփոխումը | 2025 թվականի հունվար |
|-----------------|------------------------|----------------------|-----------|----------------------|-----------|----------------------|
| 1 | Բնակարան | 344 | 6.1% | 365 | 42.6% | 256 |
| 2 | Անհատական բնակելի տուն | 464 | -20.5% | 369 | 13.9% | 324 |
| 3 | Արտադրական նշ. շին | 46 | -39.1% | 28 | -20.0% | 35 |
| 4 | Հասարակական նշ. շին. | 102 | -14.7% | 87 | 29.9% | 67 |
| 5 | Ավտոտնակ | 203 | -15.8% | 171 | 50.0% | 114 |
| 6 | Հող | 1,813 | 4.7% | 1,898 | 16.0% | 1,636 |
| 6ա | ա/թ գյուղատնտ. նշ. հող | 930 | 9.0% | 1,014 | 28.4% | 790 |
| Ընդամենը | | 2,972 | -1.8% | 2,918 | 20.0% | 2,432 |

Աղբյուր <https://www.cadastre.am/analyze>

Գնահատողի կողմից կատարվել մարզում հողատարածքների գործարքների գների և/կամ առաջարկների վերաբերյալ փաստացի տվյալների վերլուծություն անշարժ գույքի օբյեկտների շուկայական հատվածներից, որոնց կարող է վերագրվել գնահատվող օբյեկտը.

| Գտնվելու վայրը | Ընդհանուր մակերեսը, քառ. մ. | Առաջարկվող գինը, 1 քմ /դրամ: | Առաջարկվող արժեքը ամբողջ տարածքի համար, դրամ | Տեղեկատվության աղբյուր |
|--|-----------------------------|------------------------------|--|---|
| մարզ Վայոց ձոր, համայնք Ջերմուկ, Չախափնյակ թաղամասի 7-րդ փողոց | 64,0 | 7 344 | 470 000 | ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 2072 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Ջերմուկում | 1 600,0 | 11 250 | 18 000 000 | https://www.list.am/item/22908735?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Չախափնյակ թաղամասում Ջերմուկում | 750,0 | 3 227 | 2 420 000 | https://www.list.am/item/22125368?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Չախափնյակ թաղամասում Ջերմուկում | 600,0 | 3 167 | 1 900 000 | https://www.list.am/item/17758648?ld_src=2 |
| Հողատարածք հասարակական շինությունների համար Ջերմուկում | 10 000,0 | 10 200 | 102 000 000 | https://www.list.am/item/23192530?ld_src=2 |
| Հողատարածք հասարակական շինությունների համար, Երևանյան խճուղի Ջերմուկում Ջերմուկում | 4 025,0 | 6 832 | 27 500 000 | https://www.list.am/item/22311386?ld_src=2 |



| | | | | |
|--|----------|--------|------------|---|
| Հողատարածք բնակելի շինությունների համար Եղեգնաձորում | 600,0 | 6 375 | 3 825 000 | https://www.list.am/item/20572483?ld_src=2 |
| Հողատարածք հասարակական շինությունների համար, Արփայի հովիտ Ջերմուկում | 24 000,0 | 1 042 | 25 000 000 | https://www.list.am/item/19411957?ld_src=2 |
| Հողատարածք հասարակական շինությունների համար Վայքում | 2 300,0 | 435 | 1 000 000 | https://www.list.am/item/23443389?ld_src=10 |
| Գյուղատնտեսական հողատարածք Երևանյան խնուղիում Ջերմուկում | 6 500,0 | 1 846 | 12 000 000 | https://www.list.am/item/22697297?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Ջերմուկում | 1 010,0 | 5 530 | 5 585 500 | https://www.list.am/item/22908735?ld_src=2 |
| Հողատարածք ընդհանուր օգտագործման Մեսրոպ Մաշտոցի փողոցում Ջերմուկում | 600,0 | 9 460 | 5 676 000 | https://www.list.am/item/23374063?ld_src=2 |
| Հողատարածք ընդհանուր օգտագործման Ջերմուկում | 2 300,0 | 2 783 | 6 400 000 | https://www.list.am/item/20078286?ld_src=2 |
| Գյուղատնտեսական հողատարածք Զախափնյակ թաղամասում Ջերմուկում | 3 680,0 | 679 | 2 500 000 | https://www.list.am/item/20342713?ld_src=2 |
| Գյուղատնտեսական հողատարածք Ջերմուկում | 2 000,0 | 2 450 | 4 900 000 | https://www.list.am/item/21746616?ld_src=2 |
| Հողատարածք արդյունաբերական օգտագործման Զախափնյակ թաղամասում Ջերմուկում | 2 800,0 | 10 000 | 28 000 000 | https://www.list.am/item/21873480?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Զախափնյակ թաղամասում Ջերմուկում | 750,0 | 3 776 | 2 832 000 | https://www.list.am/item/22125368?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Զախափնյակ թաղամասում Ջերմուկում | 600,0 | 3 167 | 1 900 000 | https://www.list.am/item/17758648?ld_src=2 |
| Ջերմուկի ջրամբարի /ԴՆ/ ափին | 2 000,0 | 2 000 | 4 000 000 | https://www.list.am/item/21746616?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Եղեգնաձորում | 600,0 | 6 375 | 3 825 000 | https://www.list.am/item/20572483?ld_src=2 |
| Հողատարածք բնակելի շինությունների | 1 200,0 | 6 667 | 8 000 000 | https://www.list.am/item/23588923?ld_src=10 |



| | | | | |
|---|---------|---------------|------------|---|
| համար Վայքում | | | | |
| Հողատարածք ընդհանուր օգտագործման Ջերմուկի խճուղում Վայքում | 3 555,0 | 4 228 | 15 030 000 | https://www.list.am/item/22039830?ld_src=10 |
| մարզ Վայոց ձոր, համայնք Վայք, Ջերմուկի խճուղի | 66,0 | 6 818 | 450 000 | ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 1213 Անշարժ գույքի հասցե՝ մարզ Վայոց ձոր, համայնք Վայք, Ջերմուկի խճուղի |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Երիտասարդական փողոցում Վայքում | 2 400,0 | 3 125 | 7 500 000 | https://www.list.am/item/23480613?ld_src=10 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար, Եղեգնաձորում | 2 125,0 | 2 306 | 4 900 000 | https://www.list.am/item/21253648?ld_src=2 |
| մարզ Վայոց ձոր, համայնք Վայք, Վ. Համբարձումյան փողոց 1-ին նրբանցք | 1 000,0 | 3 000 | 3 000 000 | ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 2075 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Ստեփան Ծահումյանի փողոցում Վայքում | 700,0 | 8 050 | 5 635 000 | https://www.list.am/item/21449531?ld_src=10 |
| Հողատարածք բնակելի շինությունների համար Եղեգնաձորում | 2 300,0 | 4 158 | 9 564 000 | ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 3527 |
| մարզ Վայոց ձոր, համայնք Ջերմուկ գյուղատնտեսական | 2 000,2 | 145 | 290 000 | ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 7770 |
| մարզ Վայոց ձոր, համայնք Ջերմուկ գյուղատնտեսական | 2 000,0 | 145 | 290 000 | ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 2071 |
| Միջին արժեքը | | 4 553 | | |
| Նվազագույն արժեքը | | 145 | | |
| Առավելագույն արժեքը | | 11 250 | | |

Գործարքների գների և/կամ առաջարկների վերաբերյալ փաստացի տվյալների վերլուծություն անշարժ գույքի օբյեկտների շուկայական հատվածներից, որոնց կարող է վերագրվել գնահատված օբյեկտը. Արժեքի միջակայքը եղել է առավելագույն 11 250 դրամ/քմ/ – նվազագույնը 145դրամ./քմ./, միջին արժեքը՝ 4 553 դրամ./ քմ./՝ առանց գնային գործոնների հաշվի առնելու



5 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

5.1 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


| Հողամաս | |
|--|-------------------------------|
| Նպատակային նշանակությունը | բնակավայրերի |
| Գործառնական նշանակությունը | բնակելի |
| Տարածազնահատման գոտին | 12 |
| Տարածազնահատման գոտու միավորի կադաստրային արժեք (դրամ) | 2887,5 |
| Ընդամենը հողամասի կադաստրային արժեք (դրամ) | 193 462,50 |
| Երկրաչափական տեսք | կանոնավոր բազմանկյուն |
| Կառուցապատման չափորոշիչներ | միջին |
| Հողամասի մակերես (քմ) | 67,00 |
| Թերություն | հարթ, թույլ թեքությամբ |
| Տեղադրություն գրավչություն | միջին |
| Դիրք | միջին |
| Տարածաշրջանի գրավչություն | միջին |
| Ճակատային եզրագիծ | Երկրորդական փողոցի հետ |
| Տրանսպորտային մատչելիություն | ասֆալտապատ և գրունտային |
| Ենթակառուցվածքներ | |
| Ամփոփում | հնարավոր է միացնել |

Գնահատվող գույքի գտնվելու վայրը քարտեզի վրա

The screenshot displays a GIS application interface. The main window shows a cadastral map with numerous plots, each labeled with a unique identification number (e.g., 10-002-0029-0001, 10-002-0030-0001). A red circle highlights a specific plot. The sidebar on the right contains a search and filter panel with the following fields:

- Ֆորմատներ: Որոնում | Յեռացնել
- Կարգատրային կոդ: 10-002-0030-0044
- Մակերես >=:
- Մակերես <=:
- Ստեղծ ժամանակ >=:
- Ստեղծ ժամանակ <=:
- Որոնման արդյունք [շերտ: Ֆողամասեր]
- Կարգատրային... Մակերես Ստեղծ ժաման...
- 10-002-0030-00... 67.3 25-12-2025 14:...
- Գրառման մանրամասն դիտում [շերտ: Ֆողամասեր]
- Մուտք
- Կարգատրային կոդ 10-002-0030-0044
- Մակերես 67.3
- Ստեղծ ժամանակ 25-12-2025 14:33:27

At the bottom of the map, the coordinates are shown as Lat: 39.815982 Lon: 45.671368 and the scale is 1:1000.



Գնահատվող անշարժ գույքը գտնվում է տարածաշրջանում վատ պահանջարկ և տեղակայման գրավչություն ունեցող վայրում: Գնահատման ամսաթվի դրությամբ անշարժ գույքի շուկայում վաճառքի հրապարակային ցուցադրման են դուրս բերված նմանատիպ անշարժ գույքի օբյեկտներ, որոնց քանակը գերազանցում է պահանջարկին: Նմանատիպ անշարժ գույքերի առաջարկը պահանջարկին գերազանցում է նաև ՀՀ այլ համայնքներում: Անշարժ գույքի շուկան, գնահատման ամսաթվի դրությամբ, հանրապետությունում գտնվում է համեմատաբար կայուն փուլում, թեև գնահատմանը նախորդող ժամանակահատվածում արձանագրվել է շուկայական արժեքի աճ: Աճը պայմանավորված է մեծամասամբ մակրոցուցանիշներով:

6 ՇԵՆՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շենքերի և շինությունների լավագույն ու առավել արդյունավետ օգտագործումը, որը կիրառվել է այս հաշվետվությունում, որոշվում է որպես օբյեկտի օրենքով հնարավոր և թույլատրելի օգտագործում լավագույն հատուցմամբ, որը կապահովի ամենաբարձր ընթացիկ արժեքը գնահատման պահին:Խ

Շենքերի և շինությունների լավագույն ու առավել արդյունավետ օգտագործումը ենթադրում է սեփականատիրոջ շահից զատ նաև հասարակության համար օգուտ: Ենթադրվում է նաև լավագույն ու առավել արդյունավետ օգտագործումը դիտարկել որպես գնահատողի զուտ դատողություններ իր անալիտիկ ունակությունների հիման վրա, որը կարծիք է և ոչ կատեգորիկ փաստ:



Լավագույն ու առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունն իրենից ներկայացնում է նախադրյալ օբյեկտի հետագա գնահատման համար:

Շենքերի և շինությունների լավագույն ու առավել արդյունավետ օգտագործումը ենթադրում է

